

Գիտնալու էք, որ կղզւոյս մէջ գետինները շարժուն են եւ կը քայլեն:

–Մենք այդ հրաշքին չենք հաւատար:

–Թերահաւատ էք ուրեմն:

–Թերահաւատութիւնն չենք ընդունիր:

Շատախօսութիւն ընելու ժամանակ չունիմ. ըսածս ապացոյցներով եւ կենդանի վկաներով կարող եմ հաստատելու: Այո՛, գետինները կքալեն. ուստի անոնք որ կղզւոյն հարաւային կողմը գետին ունենալ կ'ուզեն՝ պարտաւոր են հիւսիսային կողմէն գետին ծախու առնել. քանի մը օրուան մէջ այդ գետինը դէպ ի հարաւ ճանքայ կելնէ: Անոնք որ ծովեզերքին վրայ գետնի տէր ըլլալ կ'ուզեն՝ ծովու մէջ քանի մը հազար կանգուն գետին առնելու են. շաբթուան մը մէջ այդ գետինը ծովեզերքին վրայ կու գայ կհաստատուի: Մա ալ մտքէ հանելու չէ, որ եթէ գետին մը ծախու առնելու ըլլաս՝ չորս կողմը պատ քաշելու ես, վասն զի եթէ պատով չըջափակես զայն՝ այնչափ կքալէ որ ծովէն անցնելով Քարթալ կ'երթայ եւ երբեմն ալ այնչափ կ'երթայ, որ բոլորովին անտեսանելի կ'ըլլայ:

–Բայց ի՞նչպէս կը քալեն այս գետինները. բնաւ հաւատալիքս չգար:

–Եթէ չես հաւատար՝ փորձի համար քանի մը հարիւր կանգուն տեղ առ եւ կը հաւատաս:

–Ուրեմն այդ գետինները քալեցնո՞ղ մը կայ:

–Զգիտեմ, բայց բարեկամներէս մին կ'ըսէր, թէ կղզւոյն գետիններն անիւի վրայ դրուած են. կրնաս զանոնք տանիլ՝ ուր որ ուզես:

–Այդ անիւը դարձնո՞ղ մը կայ արդեօք:

–Հարկաւ:

–Այդ դարձնողը կրնա՞ս ինձի ներկայացնել:

–Ի՞նչ պիտի ընես:

–Պէտքիւք տէրէ տուն մը ունիմ այնպիսի թաղի մը մէջ, որ բնաւ յարգ չունի. եթէ այդ մարդն իմ տունս Պէտքիւքտէրէի ծովեզերքն քալեցունէ՝ հազար ոսկի կու տամ իրեն: Կը քալէ՞ արդեօք:

–Կղզւոյն մէջ ոչ միայն կը քալէ, այլ կը վազէ. բայց չգիտեմ թէ Պէտքիւք տէրէյի մէջ ալ կքալէ:

–Շատ բան, շատ բան, գետինին ալ քալելը բնաւ լսած չունէի. ըսել է թէ այդ կղզւոյն բնակիչներն չեն շարժիր, կը պառկին եւ կը քնանան:

–Ինչո՞ւ: